ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Մայիսի 3-ին, կիրակի.—Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ):

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն վրդ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Երկինք և երկիր անցցեն, և բանք իմ մի անցցեն» (Մատթ. ԻԴ. 35) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 6-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Մայիսի 10-ին, կիրակի.—Կարմիր Կիւրակէ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Նարեկ քհն. Մատարյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Մայիսի 13-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Մայիսի 17-ին, կիրակի.—Տօն Երևման Ս. Խաչի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Միքայել քհն. Կյուրեղյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Այսօր ընդ ամպս լուսաւորս երևեալ նշան Տէրունական Խաչին բոցանիշ փայլմամբ և արեգնակերպ ճառագայթիւք» (Շարակնոց) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Մայիսի 20-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Մայիսի 24-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Խաչատուր քհն. Ֆրանկյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Ցիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի» (Ժամագիրք) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետի նախագահությամբ կատարվեց հոգեհանգիստ 1918 թ. Սարդարապատի հերոսամարտում զոհվածների հիշատակին:

*
* *

Մայիսի 27-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ հերթական միաբանական հավաքույթ:

*
* *

Մայիսի 28-ին, հինգշաբթի.—Համբարձումն Քրիստոսի:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, օրվա մեծ տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Պարգև աբղ. Մարտիրոսյանը և Իշման ս. սեղանի վրա քարոզ խոսեց՝ «Եւ ինքն Տէր Յիսուս յետ խօսելոյն ընդ նոսա համբարձաւ յերկինս, եւ նստաւ ընդ աջմէ Հօր» (Մարկ. ԺԶ 19) բնաբանով:

Հավարտ ս. պատարագի կատարվեց Հայրապետական մաղթանք՝ 1441 թ. Հայրապետական Աթոռի՝ Սսից Ս. Էջմիածին փոխադրության տարեդարձի առթիվ:

*
* *

Մայիսի 31-ին, կիրակի.—Երկրորդ Ծաղկազարդ:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն աբղ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Արդ եղերուք դուք կատարեալք, որպէս եւ Հայրն ձեր երկնաւոր կատարեալ է» (Մատթ. Ե 48) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 3-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունիսի 10-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունիսի 14-ին, կիրակի.—Սկիզբն Յարութեան Կիրակէից: Յիշատակ Եղիայի մարգարէին:

Այսօր Մայր տաճարում, Ավագ ս. սեղանի վրա, ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Դամասկոսի և Հունաստանի առաջնորդ գերաշնորհ Տ. Ոսկան եպս. Գալփաքյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզ խոսեց՝ «Եւ ասաց Աստուած, Արասցուք մարդ ըստ պատկերի մերում և ըստ նմանութեան... Եւ արար Աստուած զմարդն ի պատկեր իւր, ըստ պատկերի Աստուծոյ արար զնա» (Ծննդ. Ա 26—27) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Հունիսի 15-ին, երկուշաբթի.—Սրբոց կուսանացն Հռիփսիմեանց:

Այսօր Ս. Հռիփսիմե վանքում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց Տ. Զավեն վրդ. Խաչատրյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց:

*
* *

Հունիսի 16-ին, երեքշաբթի.—Սրբոց կուսանացն Գայիանեանց:

Այսօր Ս. Գայանե վանքում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց տեղի ծիսակատար քահանա Տ. Հարությունն քհն. Դարբինյանը և «Հայր մեր»-ից առաջ օրվա տոնի առթիվ քարոզ խոսեց:

*
* *

Հունիսի 17-ին, չորեքշաբթի.—Այսօր Վեհարանում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ:

*
* *

Հունիսի 18-ին, հինգշաբթի.—Տօն Սրբոյն Յովհաննու Կարապետին և Աթանագինեայ եպիսկոպոսին:

Այսօր Ս. Շողակաթ եկեղեցում, օրվա տոնի առթիվ, ս. պատարագ մատուցեց վանքի վանահայր Տ. Գրիգոր քհն. Տերտերյանը և «Հայր մեր»-ից առաջ հավուր պատշաճի քարոզ խոսեց: